ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ

Սվետլանա Սահակյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Նուր Սուլթան, Ղազախստան, 7-9 սեպտեմբերի

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ԱՊՀ Գործադիր կոմիտե

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ԱՊՀ երկրների մշակութային համագործակցության խորհրդի նիստին

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

ԱՊՀ երկրների մշակութային համագործակցության խորհրդի նիստին, որը կայացավ ս. թ. սեպտեմբերի 8-9-ը Ղազախստանի ազգային թանգարանում, մասնակցում էր 9 երկիր, որից 7-ը (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզ-ստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Թուրքմենստան) ներկայացված էին մշակույթի նախարարների տեղակալների մակարդակով: Ադրբեջանը ներկայացնում էր ոլորտը համակարգող նախարարության աշխատակազմի ղեկավարը, իսկ Հայաստանը ներկայացնում էի ես:

Նիստին մասնակցում էին նաև ԱՊՀ Գործադիր կոմիտեի ներկայացուցիչը, Դելփյան խաղերի միջազգային կոմիտեի տնօրենը:

Նիստի օրակարգում ընդգրկված էր 17 հարց, դրանց թվում՝

- Մշակույթի ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների 2021-2025 թթ. հիմնական միջոցառումների կատարման մասին հարցը,
- «2022 թվականը ԱՊՀ-ում Ժողովրդական ստեղծագործության և մշակութային ժառանգության տարի» միջոցառումների իրականացումը,
- ԱՊՀ երկրներում մշակութային քաղաքականության և իրականացված ծրագերի վերաբերյալ մասնակից երկրների ամփոփ հաղորդումները,
- «2023 թվականը՝ ԱՊՀ-ում Ռուսաց լեզվի տարի» ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումների մասին տեղեկատվության փոխանակումը և ձևավորված ծրագրին հավանություն տալու հարցը,
- ԱՊՀ անվանի անձանց և պատմամշակութային հիշարժան վայրերի մասին հրատարակությունների և ալմանախերի ստեղծման հարցը,
- 2024 թվականին «ԱՐՏ ԷՔՍՈ» ցուցահանդեսը Ղրղզստանում անցկացնելու հարցը,
- «Համագործակցության մշակութային մայրաքաղաքներ» ծրագրի իրականացման ընթացքը,
- Թանգարանային գործի բնագավառում ԱՊՀ երկրների համագործակցության համաձայնագրի կիրարկման հարցը,
- Մշակութային ժառանգության վիրտուալ թանգարանի ստեղծման և զարգացման հարցը,
- «Драгоценное ожерелье Содружества» նախագծին հավանություն տալու հարցը,
- Կինեմատոգրաֆիայի և թատերահամերգային ոլորտում համագործակցության զարգացման հարցերը,
- ԱՊՀ երկրների մշակութային համագործակցության խորհրդի նոր նախագահի ընտրության և հերթական նիստի անցկացման վերաբերյալ հարցերը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Նիստը բացեց և վարեց Ղազախստանի մշակույթի և սպորտի նախարար Դաուրեն Աբաևը: Նա ողջունեց բոլոր մասնակիցներին, առաջարկեց

հաստատել նիստի օրակարգը և նիստն անցկացնել հակիրճ հաղորդումների ձևաչափով:

Պարոն Աբաևը ներկայացրեց Ղազախստանի մշակութային քաղաքականության գերակայություններն ու իրականացված ծրագրերը և խնդրեց մասնակից երկրներին ներկայացնել իրենց երկրներում իրականացվող մշակութային քաղաքականության առանձնահատկությունները:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության առանձնահատկությունները, հատուկ անդրադարձ կատարեցի դրամաշնորհային ծրագրերին և ֆինանսավորման նոր մեխանիզմներին: Ելույթիս մեջ նշեցի, որ մշակութային քաղաքականությունը բխում է «ՀՀ կառավարության 2021-2025 թթ. գործողությունների» ծրագրից և «Հայաստան 2050» վերափոխման ռազմավարության տեսլականից, տեղեկացրեցի, որ պատրաստվել է «Մշակույթի պահպանության և զարգացման 2022-2027 թթ. ռազմավարությունը», որը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Խոսքիս մեջ անդրադարձա նաև ներառական և կրթական ծրագրերի իրականցման հարցերին՝ ընդգծելով, որ Հայաստանի կառավարության և ՀՀ ԿԳՄՍ նախարարության համար այս ուղղությունները անչափ կարևոր են: Գործընկերներին տեղեկացրեցի իրականացված և սպասվելիք մշակութային միջոցառումներին մասին:

Ելույթիս մեջ անդրադարձա նաև օրակարգի 4-րդ և 13-րդ հարցերին (ԱՊՀ շրջանակում 2023 թ. իրականացվող ծրագրերին և կինեմատոգրաֆիայի ոլորտում համագործակցությանը): Նշելով, որ Հայաստանը իր առաջարկությունները ներկայացրել է 2023 թ. միջոցառումների պլանում ներառելու համար, մասնակից երկրների ներկայացուցիչներին տեղեկացրեցի, որ 2023 թ. Հայաստանը նշելու է Հայկական կինոյի 100 և Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակները:

7-րդ հարցի՝ «ԱՐՏ ԷՔՍՊՈ» ցուցահանդեսի առնչությամբ, Ղազախստանի մշակույթի և սպորտի նախարարը տեղեկացրեց, որ ցուցահանդեսին այս տարի չեն մասնակցում Հայաստանը, Ադրբեջանը և Ղրղզստանը և առաջարկեց դյուրացնել ցուցահանդեսի հայեցակարգը:

Որպես «ԱՐՏ ԷՔՍՊՈ» ցուցահանդեսի հայեցակարգը առաջարկող երկիր և կանոնագարգը մշակողներից մեկը, Հայաստանի անունից ևս մեկ անգամ տեղեկացրեցի, որ ցուցահանդեսի հիմքում ընկած է ԱՊՀ երկրների վերջին 2 տարիների մշակութային արտադրանքի մասին պատմող նյութերի (աֆիշներ, բուկլետներ, տեսանյութեր), ապա նաև առանձին խմբերի և հաջողված ծրագրերի ներկայացումը և առաջարկեցի երկրներին հետևել «ԱՐՏ ԷՔՍՊՈ»-յի հաստատված կանոնակարգին: Առաջարկս ընդունվեց մասնակից երկրների կողմից:

Տաջիկստանի մշակույթի նախարարի տեղակալ Մանուչեխր Շարիֆզոդան նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ 2022 թ. Տաջիկստանում անց են կացվելու ԱՊՀ երկրների Դելփյան խաղերը և խնդրեց խորհրդի մասնակից պետություններին ձևավորել խաղերի մասնակիցների պատվիրակությունները և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցել տաջիկական կողմին: Այս հարցը պարոն Շարիֆզոդան քննարկեց բոլոր մասնակիցների հետ նաև երկկողմ ձևաչափով:

ԱՊՀ երկրների մշակութային համագործակցության խորհրդի նիստի բացմանը նախորդեց «ԱՐՏ ԷՔՍՊՈ» ցուցահանդեսի բացումը, որտեղ ողջույնի խոսքով հանդես եկան Ղազախստանի մշակույթի և սպորտի նախարարն ու ԱՊՀ Գործադիր կոմիտեի ներկայացուցիչը: Վերջինս ընթերցեց ԱՊՀ Գործադիր կոմիտեի նախագահ Լեբեդևի ուղերձը:

ԱՊՀ երկրների մշակութային համագործակցության խորհրդի նիստի շրջանակներում մասնակցեցի նաև ՌԴ կողմից ներկայացված «Թանգարանային Ռոդ Շոու» նախագծի շնորհանդեսին, որի ընթացքում ռուսաստանյան մի շարք առաջատար թանգարաններ ներկայացրեցին իրենց հավաքածուն, գործունեությունը և ապագա ծրագրերը:

Նիստի օրակարգի 5-րդ և 11-րդ (ԱՊՀ անվանի անձանց և պատմամշակութային հիշարժան վայրերի մասին հրատարակությունների և ալմանախների ստեղծում, «Драгоценное ожерелье Содружества» նախագիծ) հարցերի վերաբերյալ նիստի բոլոր մասնակիցները դրականորեն արտահայտվեցին:

Նիստի ավարտին, համաձայն գործող ընթացակարգի, ԱՊՀ երկրների մշակութային համագործակցության խորհրդի նախագահ ընտրվեց Ղրղզստանի մշակույթի նախարարը: Նիստին մասնակցող Ղրղզստանի մշակույթի, տեղեկատվության, սպորտի և երիտասարդական քաղաքականության նախարարի տեղակալ Չինգիզ Էսենգուլ ուուլուն տեղեկացրեց, որ պատրաստեն 2023 թ. Ղրղզստանում ընդունել ԱՊՀ երկրների մշակութային համագործակցության խորհրդի նիստը, որի անցկացման ժամկետների և վայրի մասին տեղեկատվությունը ԱՊՀ Գործադիր կոմիտե կփոխանցեն հաջորդ տարվա սկզբին:

Գործուղման ընթացքում առանձին հանդիպում-քննարկումներ եմ ունեցել Բելառուսի մշակույթի նախարարի առաջին տեղակալ Վալերի Գրոմադայի հետ: Վերջինս հնչեցրեց բելառուսական կողմի առաջարկը՝ 2022 թվականին Բելառուսում Հայկական մշակույթի օրեր անցկացնելու վերաբերյալ:

Ռուսական կողմի ներկայացուցիչների հետ՝ նախարարի տեղակալ Վլադիմիր Օսինցև, ՌԴ մշակույթի նախարարության թանգարանների և արտաքին կապերի վարչության տնօրենի տեղակալ Ալեքսանդր Կուզնեցովի հետ քննարկել ենք ս. թ. հոկտեմբերի սկզբին Հայաստանում կայանալիք Ռուսական հոգևոր մշակույթի օրերի կազմակերպական հարցերը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև Ռուսաստանի կինոյի թանգարանի հետ Հայաստանի ազգային կինոկենտրոնի և Սերգեյ Փարաջանովի թանգարանի համագործակցություն սկսելու և ակտիվացնելու վերաբերյալ:

Ղազախական կողմի հետ քննարկել ենք ապագա համատեղ մշակութային ծրագրերը, պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու երկրների մշակութային հաստատությունների միջև ուղիղ կապերի հաստատման վերաբերյալ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև հայկական էթնո-ջազ համույթի մասնակցության 2022 թ. Աստանայում կայանալիք «Ալեմ Սազ» փառատոնին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Նիստի ավարտին ընդունվեց և խորհրդի նախագահի կողմից ստորագրվեց նիստի արձանագրությունը, որը ԱՊՀ Գործադիր կոմիտեի ներկայացուցիչը դիվանագիտական խողովակներով կփոխանցվի ԱՊՀ երկրների մշակութային համագործակցության խորհրդի անդամներին:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ձեռք բերված պայմանավորվածությունները.

1. ԱՊՀ երկրների նախարարների և/կամ նախարարի տեղակալների մասնակցություն 2023 թ. Երևանում անցկացվող Հայկական կինոյի 100-ամյակի հոբելյանական միջոցառումներին:

2. Վերոնշյալ հոբելյանական միջոցառումների շրջանակում ԱՊՀ երկրների կինոյի օրերի անցկացում Հայաստանում:

3. Արամ Խաչատրյանի 120-ամյակին նվիրված համատեղ հոբելյանական ծրագրերի իրականացում ՌԴ, Բելառուսի և Ղազախստանի մշակույթի նախարարությունների հետ համատեղ՝ տարվա ընթացքում:

4. Հայկական մշակույթի օրեր Բելառուսում՝ 2022 թ. վերջ/2023 թ. սկիզբ:

5. Հայկական էթնո-ջազ համույթի մասնակցություն 2022 թ. աշնանը Աստանայում կայանալիք «Ալեմ Սազ» փառատոնին:

6. Ռուսական թանգարանների՝ մասնավորապես Կինոյի թանգարանի հետ համագործակցության հաստատում: Վերջինիս մասնակցություն Հայաստանում կայանալիք Ռուսական հոգևոր մշակույթի օրերի ծրագրին:

7. Ղազախստանյան մշակութային հաստատությունների և հայաստանյան մշակութային հաստատությունների միջև ուղիղ կապերի հաստատում, համատեղ ծրագրերի նախանշում:

8. Ղազախստանի մշակույթի օրեր Հայաստանում՝ 2024 թ.:

Սվետլանա Սահակյան

13.09.2022